

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маска“.

Կամ Tiflis, Rédaction „Maschak“.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցիտով.

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Հ Մ Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կարճակ անաջող.—Ներքին Տեսչութիւն.
Մամուլ. Նամակ Սխալաբերից. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Թիւր-
քաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՆԱ-
ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Ստիւժ:

ԿԱՐՁՆԱԼ ԱՆԱՋՈՂ

Մի նոր դաւադրութիւն Փրանսիական
հանրապետութեան դէմ, բայց դարձեալ
անաջող: Ուղիղ տարբ տարի առաջ Ֆր-
անսիան վերջացեալ էր գնեալ Բու-
լանտէի գործը. 1889-ին, մինչև ամառը,
այսինքն մինչև համաշխարհային ցուցա-
հանդէսի բացումը, Փրանսիական սենատը,
որ վերաժառէր բարձրագոյն դատարա-
նի, դատաւարտեց Բուլանտէին, որ փա-
խել էր Փրանսիայից, այն պատճառով, որ
նա դաւադրութիւն էր սարքել կառավար-
չական ձեռք ոչնչացնելու համար: Եւ գե-
ներալին այդ դատաւարտեց յետոյ մնում էր
ինքնասպանութեան դիմելու... Տասը տա-
րուց յետոյ նոյն փորձը կատարում են Բու-
լանտէի կողմնակիցները, այս անգամ չու-
նենալով մի յայտնի առաջնորդ: Այս ան-
գամ, ինչպէս կարելի է երեւոյր, դա-
ւադրութեան գլուխ սխալ անցնէին նախ-
կին արքայական տներին ներկայացուցիչնե-
րը և Ֆրանսիան, եթէ անողովի դաւադ-
րութիւնը, 28 տարի հանրապետական
կարգերին երկրպագելուց յետոյ, դարձեալ
պիտի միապետական երկիր դառնար: Ձուր
չէին վերջին տարիներում այնքան զրգը-
րուած զօրքը, զուր չէր «Հայրենասէրնե-
րի Լիգան» իր Կէրուէլէնով կուրծք ծե-
ծում թէ կառավարութիւնը զօրքի դէմ
է: Ինքներալ Նեգրիէի դէպքը շատ պարզ
ցոյց տուեց, որ զօրքի մէջ էլ արդէն հա-
տառով էր այդ կարծիքը և Փրանսիա-
կան բանակը կարող էր մի գործիք դառ-
նալ, որով կը կատարվէր մի պետական յե-
ղափոխութիւն:

Բայց այս անգամ էլ չաջողվեց: Առում
ենք չաջողվեց, որովհետև դաւադրութիւ-
նը ժամանակին բացվեց, իսկ այս հանգա-
մանը հանրապետութեան յաղթանակի
համահասարակ մի բան է: Մի ուրիշ բա-
րեցաւոր նշան էլ այն է, որ դաւադրու-
թեան թիւը գտնուող Վալդէ-Բուսսոի մի-
նիստրութիւնն է, որ սկզբից և եթ ցոյց

տուեց երկիրը խաղաղացնելու և օրէնք-
ները յարգել տալու մի բուռն և ուժեղ
ցանկութիւն: Նախկին մինիստրութիւննե-
րը, որոնց գլխավորներն էին Կլապիւրի,
Մէլին, աշխատում էին փաղաքշէլ բոլոր
կուսակցութիւնները, ամենքին սիրելի ե-
րևալ. բայց Վալդէ-Բուսսո և իր ընկեր-
ները զիջողութիւնների, կոմպրոմիսների
բաղադրանքներով թողին և նպատակ
ընտրեցին ստեղծել մի ուժեղ կառավար-
ութիւն, որ այնքան հարկաւոր էր Ֆր-
անսիային: Ինչպէս յայտնի է, պարլա-
մենտի և սենատի հանրապետական կու-
սակցութիւնները, որոնց թիւում և սո-
ցիալիստները, զգուշ էին, որ հանրապե-
տութեան վտանգ է սպառնում, ուստի և
միացան Վալդէ-Բուսսոի մինիստրութիւ-
նը պաշտպանելու համար արքայականնե-
րի, նացիոնալիստների և Մէլինի կուսակ-
ցութեան դէմ: Այս պետական դաւադ-
րութիւնը բացվում է հէնց այն տարի-
նի մէջ, որոնք ներկայ մինիստրութեան
թշնամիներն էին, և դա մի շատ նշանա-
ւոր հանգամանք է, որ դալիս է ուժե-
ղացնելու այժմեան կառավարութիւնը:

Մենք դեռ դաւադրութեան իսկական
սկզբունքն ենք: Գնում էինք, ի հարկէ,
կը մերկայնէ շատ հանգամանքներ և գու-
ցէ այն ժամանակ բոլորովին պարզ կը
լինի թէ ինչու Փրանսիան այնքան տակն
ու վրա էր դառնում վերջին երկու տա-
րիների ընթացքում մի դատաւարական
հասարակ գործի, մի Երէջֆուսի պատճա-
ռով: Յամենայն դէպս, Փրանսիական հան-
րապետութեան բարեկամները կարող են
գուշ և ուրախ լինել, որ դաւադրութիւնը
չաջողվեց և նրա կազմակերպիչները այժմ
բանտում են գտնվում: Վալդէ-Բուսսո
մեծ ծառայութիւն արաւ իր հայրենի-
քին. Բուլանտէի դաւադրութիւնը դժուար
չէր բաց անել, որովհետև այդ գնեալը
գործում էր բացարձակ, գլուխութիւնը
աւելորդ էր համարում. այն ինչ այժմեան
դաւադրութիւնը գաղտնի էր, և հարկա-
ւոր էր կառավարութեան աշխուրժ հսկո-
ղութիւնը գաղտնիքը բաց անելու և յան-
ցանքը հոտառառով փաստել ձեռք բերե-
լու համար: Փրանսիական պարլամենտը
այժմ նիստեր չունի. և երբ մինիստրութիւնը
իր գործունէութեամբ հանդէս կը գալ նրա
առաջ, կասկած չը կայ, որ բոլոր հանրապե-
տականները կը միախառնվեն նրան պաշտպա-

նելու համար և ոյժ կը տան, որ նա շա-
րունակէ իր սկսածը, այսինքն ամրացնէ
հանրապետութիւնը և ոչնչացնէ նրա
թշնամիներին: Այս հանրապետական միա-
խմբումը տեղի ունեցաւ Բուլանտէի ժա-
մանակ և այժմ էլ առանց նրան անհա-
րին կը լինի դիմադրել դաւադրութեան
հեղինակներին և կողմնակիցներին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Գիւղերի հեծեմանը»... Ո՞րտեղից է գալիս
նա—Այս անգամ Անգլիայից, այն երկրից, որը
իր բարեկեցութեամբ, իր հարստութեամբ ըն-
վանդակ աշխարհի նախնին է չարժուած: Բա-
նից դուրս է գալիս, որ գիւղը գիւղ է ամեն
տեղ, թէկուզ լինի դա նոյն իսկ ծովերի հպարտ
թաղուհու երկրում: Իսկ գիւղը նրանով է գիւղ, որ
հեծեմանընէր է արձակում, հեծեմանը իր անդ-
նակաւորութեան, իր անհարկութեան մասին: Հե-
ծում է նա, որ իրան մոռացել են, որ իր ցա-
ւերը միմիայն իրան են յայտնի մնում: Մեր այդ
հայրենի հեծկտանըները կարող էր տեսնել և
որիշ աշխարհներում: Դոկտոր Ջեյմսոն անգ-
լիական «Nineteenth Century» ամսագրի մէջ
հէնց այդ գիւղի մասին է խոսում և իր յո-
ղուածի վերնագրին էլ դրել է «Գիւղերի հեծե-
մանը»: Այդտեղ հեղինակը համեմատում է գիւ-
ղացուն քաղաքները մէջ ապրող բանտերների
հետ և, չուրանալով, որ բանտերների դուրսից
լաւերից է, որ քաղաքներում էլ աղքատու-
թիւնը ծանր է ու մաշեցնող, բայց քաղաքի
աղքատութիւնը համեմատաբար գիւղականից
թեթեւ է, որովհետև քաղաքներում աղքատու-
թիւնը էլի կարողանում է ձայն բարձրացնել և
նրան իսկոյն լսում են, մինչդեռ գիւղի աղքա-
տը ճակատագրի կամքին է թողնված:

Գիւղացի աղքատները չունեն նոյն իսկ
այնպիսի բաներ, որոնց վրա քաղաքի բնա-
կիչը անուրաքանչեւ իրաւունքներ ունի. չը կայ
ոչ խմելու ջուր, ոչ կացարան, ոչ բժշկական
օգնութիւն հիւանդութեան դէպքում, ոչ նոյն
իսկ ամենամասնաւոր դուրսնութիւններ, ոչ հա-
տարակութիւն, ոչ կրթութիւն միջոց: Ո՞վ կը
տալ նրանց այդ բաները: Կարուածատէրը,
պարտաւատէրը, պատուիրները: Բայց դրանք
մեծ մասամբ հազիւ են գլուխ պահում, ի-
րանք էլ տղէտներ են, բխցած այդ մո-
ռացված անկիւններում:

Գիւղից հեռացել է ամեն ինչ, հեռանում
է նոյն իսկ սէրը, որով աղիւկները 14 տարե-
կանից դուրս են քաղաքները, որպէս զի ծա-

ռայութեան մահն և այլ ևս չեն ուզում վերա-
դառնալ գիւղը: Ո՞վ պիտի օգնէ: Հեղինակը
յոյս չունի գիւղական հողատէրերի, բանաս-
ների վրա և դիմում է հարուստ մարդկանց:

Հարցը ուսումնասիրելով բազմակողմանի
կերպով, ես դրականապէս հաստատում եմ,
որ անգլիական իւրաքանչիւր գիւղ կարելի էր
երկու-երեք տարում մի օրինակելի բան դարձ-
նել, եթէ նրա վրա ինչպիսի կերպով ծախս-
վէր մի այնպիսի գումար, որ կը կազմէր մի
շատ անշնան ժամ այն ահագին ծախսերի,
որոնց իւրաքանչիւր տարի կը ծնում է մեր
քաղաքների չուայութիւնը:

Գիւղի հեծեմանըներ... Մեզ մօտ էլ նը-
րանք լսվում են անդադար, մեզ մօտ էլ գիւ-
ղերը արևուն-արտասուի են թափում իրանց
տղիտութեան, իրանց մերկութեան վրա: Մենք
էլ ունենք հարուստներ, մեր մէջ էլ չուայու-
թիւնը ահագին գումարներ է վատնում վաղա-
ցուկ, բոյգական հաճոյքների համար: Եւ եթէ
Անգլիայում կարող է այդ հարուստների օգ-
նութիւնը, այնտեղ, ուր երկաթուղիներն մի
խիտ ցանց է ծածկում երկրի երեսը, ուր ժո-
ղովրդական կրթութիւնը հոկայական չափերով
է տարածվում, ապա ուրեմն որքան հարկաւոր
է, որ չուայութիւնից մի համետ մաս ինչպիսի
յօղուտ մեր գիւղերի, որոնք կապված են մի-
մեանց հետ անորոշ հեղեղեան ճանապարհներով
և որոնք խաւար են, այնքան խաւար, որ չը
գիտեն թէ կայ արդեօր մի հնար, որ դուրս
հանէր նրանց այդ եղբայրական գերութիւնը...

Օտար բաները օրէցոր դառնում են կատա-
րեալ սարսափ և վարձուրանք արւուտորում
լոյս տեսնող հայրենի պարբերական հրատարա-
կութիւնների համար: Պարզիկ «Բանասէր» հան-
դէսի երկրորդ գրքի մէջ, որ նորիս լոյս տեսաւ,
կայ մի մասնագրական յօդուած Ստ. Մալխա-
սեանցի «Սերբիոյ պատմութիւնը և Մ. Մորե-
նացի» աշխատութեան մասին: Յօդուածը վեր-
ջանում է այնպիսի խօսքերով.

Արախալի է որ ամբողջ գրուածքին մէջ
երկու բառ միայն օտար կայ. պարագայ մը
որ ուշադրութեան արժանի է, թէ ևս փա-
փաքէինք Մալխասեանցի մը գրչէն հեռու
տեսնել նոյն իսկ այդ երկու բառերն:

Մենք չը գիտենք, թէ այդ ինչ օտար բա-
ռեր են, որոնց փոքր թիւը այնքան նշանաւոր
հանգամանք է հնագիտական հանդէսի համար:
Եւ ինչո՞րք այդ չէ: Օտար բառերը կարող են
լինել մի գրուածքի մէջ և այն էլ ոչ թէ մէկը,
կամ երկուսը, այլ աւելի շատ. սա մի անհրա-
մեջութիւն է, որից խուսափել բոլորովին ան-
հնարին է այն գրողի համար, որ խօսում է
կենսից, որ կենդանի երևոյթներ է չօտարում:

Մի օր մի անցորդ դատաստոս նոյն իսկ
դատաստոսութիւն կարողաւ Անտիօպայում «աղ-
գելի իրաւունքները մասին»: Բնակիչներից հա-
րուստները արդէն սկսել էին խօսել համալսա-
րան հիմնելու մասին, կառավարութեան աջակ-
ցութեամբ:

Մի խօսքով, գերմանացի ըմբռն էր: Սըն-
դիկի, կիրքի, գարու և զինու առոււտուրը
մեծ շահ էր տալիս նրանց: Նրանք աղիւկ էին,
տնտես, աշխատասէր և սխալեմատիկ: Ով որ
այցելէր այդ քաղաքը աւելի ուշ, երբ նրա բնա-
կիչներն թիւը անցել էր արդէն տաս հազարից,
չէր կարողանայ ճանաչել տեղական հարուստ
վաճառականների մէջ այն անուշադր մալխա-
կայներին, որոնք տասնհինգ տարի առաջ այ-
րեցին Երաւատտայի: Նրանց օրը անցնում էր
արհեստարաններում, նիւուրներում և գրասե-
նակներում, իսկ երեկոյն՝ Բոժոժաւոր Օձերի
փողոցում, «Ուկ Արև» զարթոյրատանը: Ոձերի
այդ կոկորդային ձայները, այդ՝ mahlzeit! mahl-
zeit-ները և այդ պաղարիւն՝ Nun ja wissen
Sie Herr Müller, ist das aber möglich?-ները,
այդ՝ գաւաթների զնոցը, գրքերի չուշոցը,
գետին թափվող փրփուրի ձայնը, տեսնելով այդ
հանգստութիւնն ու տրամադրութեան հաւատա-
րութիւնը և նայելով այդ ծարպում կորած ֆի-
լիստական դեմքերին ու ձկնային աչքերին—
մարդ կարող էր կարծել, թէ գտնվում է մի որ
և է զարթոյրատան՝ Բերլինում կամ Մոնակոյում,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԱԽԷՄ

(Հէնրիկ Սէնկէվիչի)

Տէխասի չրջանում, Անտիօպայ գետի վրա
գտնվող համանուն քաղաքում ամենը շտապում
էին ցրել: Բնակիչները սաստիկ հետաքրքրու-
թեամբ էին վերաբերվում տրվելիք ներկայաց-
ման, մանաւանդ այն պատճառով, որ քաղաքի
հիմնադրութեան օրից՝ այդ առաջին անգամն էր,
որ ցրել էր եկել այնտեղ, արշաւող ու պարող
կանանցով, գուտաններով և յարակառններով:
Անտիօպայն բոլորովին նոր քաղաք էր: Տասնհինգ
տարի առաջ այդտեղ ոչ միայն ոչ մի տուն չը կար,
այլ և ամբողջ մօտաւոր չրջակայքում չը կար ոչ
մի սպիտակ մարդ: Անտիօպայ գետի բերանում,
հէնց այն տեղում, ուր այժմ տարածվում է
համանուն քաղաքը, գտնվում էր ամերիկական
հողիկների մի աւան, Երաւատտայ անունով:
Այդ՝ «ՍԱ Օձերի» մայրաքաղաքն էր, որոնք մի
ժամանակ սկսեցին այն աստիճան նեղացնել
սահմանակից Բերլին, Գրինդելհայն և Հարմո-
նիա գերմանական գաղութներին, որ գաղթա-
կանները անկարող էին այլ ևս տանել նրանց

յանդգնութիւնը: Ճիշդ է, հողիկները միայն
պաշտպանում էին իրանց հողը, որ Տէխասի
կառավարութիւնը դաշնագրիներով տուել էր
նրանց, իբրև սպառնալից կառուած, բայց դա-
րժականների ինչ հողն էր այդ: Յիրաւի, նրանք
խլում էին «ՍԱ Օձերի» հողը, ջուրը և օդը,
բայց դրա փոխարէն նրանք քաղաքակրթու-
թիւն էին մտցնում այդ երկրի, և կարմրա-
մորթեղը շնորհակալ էին լինում նրանցից իրանց
եղանակով.—մորթեղերը անելով նրանց գլուխ-
ները:

Սակայն այդ դրութիւնը չէր կարող երկար տե-
ւել. ուստի Բերլինի, Գրինդելհայնի և Հարմո-
նիայի գաղթականները, համախմբվելով մի գե-
ղեցիկ լուսնեակ զիշեր, թիւով չորս հարիւր հո-
գի, և օգնութեան կանչելով Լա-Օրայի մեքսի-
կացիներին, յարձակվեցին ընած Երաւատտայի
վրա: Յաղթանակը կատարեալ էր: Երաւատտայ
այրեցին, իսկ բնակիչներին կոտորեցին առանց
սեռի և տարիքի խտրութեան,—ողջ մնացին
միայն զինուորների մի քանի փոքրիկ խմբեր,
որոնք որսի էին գնացել: Աւանում մնացողներից
ոչ ոք չը փրկվեց՝ զլխաւորապէս այն պատճա-
ռով, որ աւանը գտնվում էր երկու գետերի
խառնարանի անկիւնում, որ գարնան, երբ գե-
տերը դուրս էին գալիս ավերից, չըջապատ-
վում էր ջրերի անաղանդների յորձանքով: Բայց
հէնց այդ դէպքը, որ հողիկների կորուստի պատ-
ճառն եղաւ, դրանց գերմանացիներին,—այդ-

մուտքը և որի վրա նկարված է սպիտակ
թերի կուռ կարամորթներ հետ Այն
վաղին, երբ վարադոյրը սկսում է բարձրա
հանդիսատեսներին ներս թողնելու համար, երև
է լուսավորված բուֆէտը սեղանի վրա շարած
բեջլի հարիւրաւոր գաւաթներով: Վերջում
վարադոյրը բոլորովին բացվում է, և Ժողովու
րդի սկսում է ներս խուճել ահագին խմբե
ր: Ստորաբանների արանքի դատարկ տարա
թիւնները սկսում են ճանշալ ոտների տա
շատ չանցած գորշագույն շաքոճու գանգու
ծածկում է բոլոր անցքերը հորեն լցնել
Յիրենում լայն է, ինչպէս օր-ցորենով: Գա
նակցաբանները, — աղ հաշի չէ, — բայց յի
նաւթ է լամպերից բաղկացած մի մեծ
ողողում է ապարքը և հանդիսատեսն
լայն ահագին հեղեղով: Այդտեղ երևում են
բեջլատէրները սիրացած և մասած դէպ
քով գլուխ դէմերը վերան կուրծքը կախված
կատակներով և ջահէլ կանանց ու զարմ
եքեքաների դէմքեր՝ ահամբոս սպասողու
արտայայտութեամբ: Ասենք, բոլոր հանդ
եսները դէմքերն էլ հետադարձ են, դո՛ս
տան, ինչպէս առհասարակ լինում են ցիբ
ցեղունքի դէմքերը: Խօսակցութեան աղ
մէջ, որ ընդհատվում է frisch wasser!
bier! աղաղակներով, ամենը անհամբերութ
յալուստ և ներկայացման սկզբին:

(Կը շարունակ)

կու վերադարձաւ հետո է: Ամբողջին հետեւում էին 80 կողմնակիցներ և 30 օրհորդներ ու Նու- նէի դպրոցից: Ճաշ կար պատրաստված այդ օ- րը և հրաւիրված էին Ղուբայից աստիճանաւոր- ներ և Հուսարի զինուորական և քաղաքացիական պաշտօնականները: Խօսքերն ճառեր Բագուի կա- սիական գիմնազիայի զինվորական Ա. Ի. Պրեզի- անոսով և Գ. Ի. Տարասով, որը գլխավոր նա- խաձեռնողն է եղել կողմնակից շինութեան: Կո- լոնիայի շինութիւնը նստել է 11,370 ր.: Այդ գումարը ծախսել է պ. Տարասով թէ իր սեփա- կան միջոցներով և թէ մասնաւոր անձանց նուիրատուութիւններով: Ուսանողները թիւը հասնում է 80-ի, որոնցից 30-ը ապրում են ձրի, իսկ մնացածները վճարով, 126 ր. ամսաբային ե- րեք ամսվայ սեզօնի համար: Ուսուցիչները թիւը հասնում է 20-ի: Պարագլուխները կողմնա- յում բազմաթիւական են, այն է՝ մեղուապահու- թեամբ պարապում են 6 աշակերտ, խրտուրիակ- ներ շինելու արուեստանոցում՝ 12 աշակերտ: Կոլոնիան գեղեցիկ շինութիւն է և պարունա- կում է իր մէջ մի քանի կորպուսներ թէ ուսա- նողներն և թէ նրանց ուսուցիչները համար: 30 դեխախորհի հող է յատկացրած նրանց վարու- ցանքի համար:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ. «Այս շաբաթ երե- ւանի շրջակայքում, մասնաւոր Վարաչիչազի կողմերում, անձրևներ տեղացին, մի քանի տեղ նոյն իսկ կարկուտ եկաւ և մի քիչ վնասներ հասցրեց: Բայց անձրևը այլ ևս օդուտ չէր կա- րող բերել հացերին, թէպէտ մասամբ օդը թար- ւանացաւ և մասամբ էլ կարող է նպաստել խո- տերի աճման: Չը նայած սրան, մեղանում— Սրբանում—զովութիւնը միմիայն երկու օր տեւե- րուց յետոյ, կրկին սկսվեցին անտանելի շոքեր և ջերմաչափը ցոյց է տալիս 30, իսկ արեգա- կի տակ մինչև 50°ս:

Ղազարի գաւառի ԿՈՂԲ զիւղից մեզ գրում են. «Յուլիսի 27-ի դիւերը այստեղ անձնապա- նութիւն գործեց երկուսուսուր հասակում Աւե- տիք Տէր-Յարութիւնեան, հրացանի մի հարուա- ծով: Հանգուցեալի մահվան պատճառը դեռ ևս յայտնի չէ: Նա թողել է երեք նամակ՝ պրիս- տալին, գիւղի տանուտէրին և իր հօրեղոր որ- դի Արդար աւագ քահանայ Տէր-Յարութիւնեան- ցին: Պրիստալին և տանուտէրին դրած նամակ- ներում, որոնք արդէն բացված են, անձնապա- նը գրում է թէ՝ ոչ ոքի չը պէտք է մեղադրել: Հանգուցեալը մօր միակ դստակն էր: Աւարտել էր իր ուսումը Գանձակի արհեստաւորաց դըպ- րոցում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻՍԻ ԹԻԻՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պօլսի «Արեւել» լրագրի մէջ կարդում ենք. —Տիարպէլերէն կը գրեն մեզ. «Տեղուց ա- մերիկեան Որբանոցին հայ սաներն ու սանու- ինները մինչև ցարդ կրօնագիտութենէ զուրկ կը մնային, միմիայն կիրակի օրերը եկեղեցի դըր- կուելով մասամբ: Այժմ, ուրախութեամբ կը ծա- նուցանենք թէ այդ հաստատութեան մէջ պա- տապարտած 140-ի չափ որբերը ոչ միայն եկե- ղեցի կու գան կանոնաւորապէս, այլ և ամեն օր եկեղեցւոյ շրջակային մէջ գտնուած դպրոցը կը յաճախեն խմբով և հին կը դաստիարակուին: Այս կարգադրութիւնը ձեռք բերելու համար, առաջնորդական տեղապահ Սէլիկէ վարդապետ երկար ժամանակէ ի վեր բանակցութեան մէջ էր Խարբըղի միութնարարութեան պետ Մըսթըր Պար- նըմի և քաղաքին հայ բողոքականներու երէց ու որբանոցին տնօրէն պատուելի Յակոբ Անտօնեա- նի հետ, որոնց ցոյց տուած քրիստոնէական ընթացքը համակրութեան ու շնորհակալութեան արժանի է:

—Երէկ հրատարակեցին Տիարպէլերի ամերի- կական որբանոցին հայ տղոց ազգային վարժարան յաճախելու մասին եղած կարգադրութիւնը: Աւստիկ այդ մասին քանի մը լրացուցիչ տեղե- կութիւններ ալ, որոնք գոհակալութեամբ պիտի կարդացուին:

«Տեղուց Բողոքականաց որբանոցին որբերուն կրթութիւնը բոլորովին յանձնուեցաւ քաղաքիս ազգային վարժարանին: Անցեալ շաբթուին ի վեր կը շարունակեն գալ մեր դպրոցները: Դասաւորութիւնները արդէն սկսած են: Որբերուն թիւը կը հասնի զրեթէ 150-ի, կէսը մանչ և կէսը աղջիկ: Միութնարներու կողմէն իբր կրթութեան ծախսը, տարուէ տարի 25-ական ոսկի պիտի վճա- րուի մեր վարժարանին: Կրտսի թէ չորս անգամ, բաղկացած հազարաճուրկին մը պիտի կազմուի միայն որբերու կրթականին հակելու համար, եր-

կուքը բողոքական և երկուքը լուսաւորական ազգայիններէ: Այս մասին առ այժմ այսպիսի» —Խարձակ Տիարպէլերէ կը գրեն մեզ.

«Ազգ. վարժարաններու տարեկան հարցաքնն- նութիւնները սկսան ամսույս 22-ին, և պիտի տեւեն մինչև յուլիս 7: Քննութիւնները ծանու- ցանող աղբ մը փակցուած էր եկեղեցւոյ պա- տր. տակէ դատ 70-ի մօտ աղբայիններու յա- տուկ հրաւիրաբեր զրկուած էին: ոչ ոք ներ- կայ գտնուեցաւ քննութեանց, ոչ հրաւիրեալնե- րէն և ոչ տղոց հայրերէն:

—Վանայ այցելու Տ. Ներսէս եպիս- կոպոս Ասլանեան ընդարձակ տեղեկագիր մը յղած էր պատրիարքարան, յայտնելով տեղւոյն եկեղեցիներուն ու դպրոցներուն խարխուղ վի- ճակը և առաջարկելով անոնց շինութեան ձեռ- նարկէ իւրաքանչիւրին համար 70 ոսկի ծախ- սելով: Նորոգութեան կարօտ եկեղեցիներուն ու դպրոցներուն թիւը կը հասնի 10-ի, որոնց հա- մար 800 ոսկի անհրաժեշտ պէտք մը ըլլալը չեղտած էր:

Նպաստից յանձնադրով իր երէկուան Նիս- տին մէջ, որ գումարահատուկ ու պատրիարք հօր նախագահութեամբ, նկատողութեան առնելով այդ տեղեկագիրը, որոշեց յանձնարարել Ասլա- նեան սրբազանին, որ առ այժմ այդ եկեղեցի- ներէն երկուքին շինութեանը ձեռնարկէ, որուն համար որոշեց ամսվայպէս 100 ոսկիի գումար մը զրկել Վան:

—Տիարպէլերի առաջնորդական տեղապահ Տ. Սելիկէ վարդապետ գրած էր պատրիարքարան թէ՛ կառավարութեան կողմէ Տիարպէլերի մէջ բացուելով արուեստագիտական վարժարանին՝ առաջնորդարանի կողմէ 1250 զուրի նուէր մը ըրած է: Յանձնադրովը գոհ եղաւ եղած նուէ- րին համար: Յաւաքիկային հայ տղաքներն ալ պիտի յաճախեն այդ վարժարանը:

—Որոշուեցաւ 200 ոսկիի չափ նպաստ զրկել վերստին Տէրսիմի, Չարսանազի, Չմկիւծազի, Սիւսի և Խիզանի կարօտեալներուն համար:

—Յանձնադրովը տեղեկանալով որ Մալաթիոյ որբանոցը 15 օրը ևս ընդունել է, և այդ պատ- ճառաւ հարկ տեսնուած է վանքին խարխուղ սենակներէն մէկը 15 ոսկի ծախքով նորոգել, որոշեց խրկել այդ գումարը:

—Մարաշի որբանոցին մասին աննպաստ տե- ղեկութիւններ հասած ըլլալով պատրիարքարան, որոշուեցաւ Սոյս ազգայիններէն Խաչիկեան Աբ- րահամ էֆէնդիի յանձնարարել, որ փութով Մա- րաշ երթայ, և տեղւոյն որբանոցին բարոյական, կրթական և նիւթական վիճակին վրա մանրա- ման ըննութիւն մը կատարելով, արդիւնքը տեղեկագրէ պատրիարքարան: Յանձնադրովը որոշեց 5 ոսկի ծախքով ծախել խաչիկեան էֆէնդիին:

—Ձէյթունէն գրած են պատրիարքարան թէ տեղւոյն բողոքականները իրենց վարժարաննե- րուն ծրագրերը սկսել են բարձրացնել և միան- գամայն տեղացի բողոքական հայերուն դրամա- զրուները հայկաթիւ, որով զիւղացի ժողովուր- դը իր երկրագործական պէտքերը կը հոգայ: Այժմ Ձէյթունի մէջ ցորենը շատ սուղ գինով էր ծախուի, և վարուցան չունեցողները կարօտ վիճակի մէջ են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՍԻ

—Կ. Պօլսի «Արեւել» լրագրից հաղորդում է. «Օսմանեան հպատակ քրիստոնեաներու քա- ղաքային պատկերներ, ծննդոց ու վախճանմանց և կտակներու պայմաններու վերաբերեալ գոր- ծողութիւնները մինչև հիմա պատրիարքարա- ններուն մէջ կը կատարուէին: Արդ, այդ գործ- ւորութիւններուն մէջ կարգ մը անկանօնութիւն- ներ գործուած ըլլալով, այդ գործողութիւննե- րուն համար ներքին գործոց նախարարութեան հսկողութեան տակ մասնաւոր ճիւղ մը պիտի հաստատուի, որպէս զի անկանօնութեանց ա- ռաջը առնուի:

—Պարիզի գերմանական դեսպան կոմս Միւն- ստէրի իշխանական տիտղոս ստանալու առի- թով՝ «National Zeitung» լրագրից ասում է. «Միւնստէրի իշխանական տիտղոս արվոյց նրա ամբողջ գործունէութեան համար՝ Գերմա- նի իր պաշտօնական գործունէութեան միջոցին Պարիզում, ոչ թէ միայն կարողացաւ պահպա- նել ֆրանս-գերմանական լաւ յարաբերութիւն- ներ, այլ և կարողացաւ այդ յարաբերութիւն- ները աւելի ևս լաւացնել անհնազուրկ ժամա- նակի Նիւտում են, որ Հասագայի խաղաղու- թեան կոնֆերանսիայում գերմանական դեսպանը կարողացաւ հարկել ամեն դժուարութիւններ, որոնք ծագում էին ֆրանսիական և գերմանա- կան պատուիրակների մէջ:

—«Patrie» լրագրից հաղորդում է, թէ լուրեր են պտտում, որ զինուորական դատարանը մտա- դիւ է Իրէյֆուսի փառաբան Ռեյմանդին հարց ու փորձի ենթարկել երդումով այն միջոցների առիթով, որ նա ձեռք է առել նախկին հանրա- պետութեան նախագահ Կադիմի Գրէթի մօտ՝

Իրէյֆուսի օգտին ճիշտ այդ լուրը ճիշդ է, ա- տում է լրագրից. —այն ժամանակ Իէմանդ այլ ևս չէ կարող հանդէս գալ իբրեւ Իրէյֆուսի պաշտպան:

—«Temps» լրագրին հաղորդում են Բէլգրա- յից, թէ Ալեքսանդր թագաւորը, ընդունելով Սերբիայում գտնվող աւստրո-ունգարական դա- ղութիւնի պատգամաւորներին, որոնք եկել էին շնորհակարարութեամբ նրան Միւնխի ազատվելու առի- թով, ասաց նրանց. «Սերբիան իր այժմեան դը- րոյթիւնով պարտական է Աւստրո-Ունգարիային, Սերբիայի թշնամիները մի և նոյն ժամանակ Աւստրո-Ունգարիայի թշնամիներն են:

—«Daily News» լրագրին հաղորդում են Հա- օմից, թէ ֆրանսիական դեսպան Բարբէրին յանձ- նարարված էր աշխատել հող պատրաստելու, որպէս զի իտալական Ումբերտօ թագաւորը կարողանայ այցելել Պարիզի ցուցահանդէսը: Ինչպէս որ մի քանի ժամանակից յետոյ իմաց տուեցին, որ Ումբերտօ թագաւորը Պարիզ դը- նալը կախված է գանապան պայմաններից: Այդ պայմանները, —հաստատուում է թղթակիցը, — վերաբերվում են իսկապէս գերմանական Վիլ- հելմ կայսրի ներկայութեանը Պարիզում, միա- ժամանակ Ումբերտօ թագաւորի հետ: Եթէ նոյն այդ ժամանակ Պարիզ չը գար Վիլհելմ կայսրը, Ումբերտօ թագաւորը այցելութեանը կարող էին ուրիշ տեսակ բացատրութիւն տալ, վնասելով Իտալիայի իր դաշնակիցների հետ ու- նեցած յարաբերութիւններին:

—«Temps» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է այն խոսակցութիւնը, որ նա ու- նեցել է ֆրանսիական արտաքին գործերի մի- նիստը Իէլիսէի հետ, վերջինիս Պետերբուրգ եղած ժամանակ: Միւնստէր յանձնարարել է թղթակիցը, որ պաշտօնապէս հերքել այն լու- րերը, որ տարածել են ֆրանսիական և ար- տասնամեան լրագրիւնները իր, մինիստրի, Պե- տերբուրգ այցելելու առիթով: «Եթէ, —ասել է մինիստրը, —կոմս Մուրաֆիեւի հետ իմ ունե- ցած երկու ժամկէտ խոսակցութեան ժամանակ, ոչ մի խօսք չէ եղել ֆրանսիական ներքին բա- ղաքական հարցերի վերաբերմամբ: Իմ այստեղ գալու նպատակն էր միայն այցելել կոմս Մու- րաֆիեւիին: Այդ հանգամանքից պարզ երևում է, որ ֆրանս-ուսական յարաբերութիւնները ոչ թէ թուլացել են, այլ ընդհակառակը աւելի ևս ամրացել են: Պետերբուրգը մի քանի անգամ Պարիզ է եկել... այժմ էլ ֆրանսիան վերադարձ- նում է վերջին այցելութիւնը: Թղթակիցը փոր- ձել է խօսելու Իրէյֆուսի գործի առիթով, բայց մինիստրը նրան զգուշացրել է, ասելով. «Ինչ- պէս որք համարձակվեցի խօսել ճնշման մա- սին: Կառավարութիւնը կատարեալ յայտնուի զինուորական դատաւորների վրա: Ահա ձեզ մի նորութիւն, որը ունի իր նշանակութիւնը: Մի- նիստը վերջին առաջին անգամ միայն լրագրի- ներից իմացաւ, թէ ինչ օրն է նշանակված գոր- ծի ընդունելու: Իսկ ինչ վերաբերում է նրա ընթացքին, կառավարութեան ոչ մի անգամ, մինչև անգամ ես, չեմ կարող ասել: Ես և է գուշակութիւն: Այդ միջոցին ներս մտաւ կոմս Մուրաֆիեւի դեսպանը զանազան թղթերով և թղթակիցը հետագայւն:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՍՈՒՄԻՍՏԻ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

4 օգոստոսի

ԻՆՆԻ: Իտալարանը գումարվեց առանց միջ- նադէպերի: Նիստը բացվեց 6 ժամ 35 րո- պէին: Դեմանձ խնդրում է, ի նկատի ունենա- րով բոլորների յայտն առողջացնել Լաբորին մինչև երկուշաբթի, յետաձգել նիստը մինչև այդ օրը:

Լաբորի այս դիւեր աւելի լաւ անցկացրեց: Յանցարանի փութելու աշխատանքները, ինչ- պէս ասում են, լաւ հետեւում են խոստանում:

ԻՆՆԻ: Զինուորական դատարանը միաձայն որոշեց, թէ չը կայ ոչ մի պատճառ նիստը յե- տաձգելու: Արդարադատութեան նախկին մի- նիստը Գերէն ցոյց է տալիս նոյնը, ինչ որ վճռաբեկ ատեանում: Նա յիշեցնում է, որ Մեք- սիէ հաղորդեց իրան 1894 թվ. հոկտեմբերի վեր- ջին թէ ինքը համոզված է Իրէյֆուսի մեղա- ւորութեան մէջ, և թէ այդ համոզմունքը հիմն- ված է բոլորեթի ձեռագրի վրա, բացի այդ այն հանգամանքի վրա, որ բոլորեթի մէջ յի- շատակված դոկումենտները չէր կարող հաղոր- դել մի ուրիշ օֆիցեր և վերջապէս այն թելադրու- թեան վրա, որ գրել տուեցին Իրէյֆուսին մի քանի օր անցած: Մերթի նորից պատմեց ամբողջ գործը մինիստրների խորհրդում, որը միաձայն թողարկեց դատի ենթակից Իրէյ- ֆուսին: Միայն Հանոսօ առաջ բերեց մի քանի դիւանագիտական առարկութիւններ: Գերէն ա- լելացնում է, թէ այլ ևս ոչինչ չը գիտէ գործի մասին: Գերէն ասում է, թէ դադարի դոկու- մենտների հետ ինքը ծանօթացաւ միայն Զօլայի դատի ժամանակ:

Գերէնից յետոյ կանչուած են Լէքօնին, որը ցոյց է տալիս, թէ համոզված է եղել Իրէյֆուսի մեղաւորութեան մէջ, և եթէ դորը նորից բա- լակէր, նա առանց տատանվելու ձեռք կառնէր

Իրէյֆուսի դէմ մինչոյն նախադրուական մի- յոցները, որ նա ձեռք էր առել այն ժամանակ նրա դէմ: Նախադրական միջոցները խիստ բնաւորութիւն ստացան, երբ մինիստրը իմա- ցաւ, որ մի ամերիկական նաւ 24 ժամ կանդ- նած է Օրհնութեան կղզիների մօտ: Հէնց որ նկատէին մի որ և է կասկածելի բան, պէտք է հրացան արձակէին Իրէյֆուսի վրա: Քարտու- ղարը կարգում է կոյօնիաների մինիստրի վեր- ջին դեկուցումը Իրէյֆուսի կեանքի և առողջու- թեան մասին Սատանայի կղզու վրա: Մանրա- մանութիւնները սաստիկ տպաւորութիւն են գործում ներկայ եղողների վրա: Լէքօն նկա- տում է, թէ այդ դեկուցումը անաչառ չէ. նա աւելացնում է, թէ ոչինչ չէ իմացել Իրէյֆուսի հիւանդութեան մասին: Նախագահը հարցնում է Իրէյֆուսին, արդեօք չո՞նի նա ասելու մի բան: Իրէյֆուս պատասխանում է. «Ես չեմ կա- մենում խօսել այն ֆիզիկական և բարոյական անգույժ տանջանքների մասին, որը կարող էր ֆրանսիացիին պատճառել մի անմեղ դատա- պարտվածի (Յուզմունք): Սա այստեղ եկել եմ իմ պատիւս պաշտպանելու համար, ուստի չեմ խօսի իմ բարոյական տանջանքների մասին» (Շարժում հանդիսականների մէջ): Կանչվում է տիկին Անրի. նա սև ունի հագած: Վկան ցոյց է տալիս, թէ իր ամուսինը 1894 թվ. սեպտեմ- բերի վերջին ասաց նրան, թէ իրան յանձնած է մի շատ լուրջ և կարևոր թուղթ: Իր ամուսինը, ասում է նա, չէր ճանաչում բոլորեթի ներկա- կին: Վկային հարցնում են այն խօսքերի մա- սին, որ նա ասել է մահից առաջ—«Ինչ դժ- րախտութիւն է հանդիպել այդպիսի դարչնինե- րին»: Տիկին Անրի ասում է, որ իր ամուսինը այդ բանը չէ ասել, նա միայն ասեց. «Դու հառ- կանում ես ի հարկէ թէ ում օգտի համար եմ ես գործել»: Նա դրանով ոչ մի անձնաւորու- թեան վրա չէր ակնարկում, նա ուզում էր ա- սել, թէ գործել է երկրի շահերի համար: Տիկին Անրի յայտնում է, թէ Անրի կեղծում կատա- րեց Պիկարի մեքենայութիւնների պատճառով, որպէս զի ազատի գործը, որ արատաւորվում էր իր թշնամիների անամօթ վարժունքներով (Շարժում):

Ներս է կանչվում գեներալ Բոժէ: Նա ցոյց է տալիս, թէ խուզարկու բերօն, հաշիգբերում չէ գտնվել ոչ մի հեռք Էստէրհադին տրված գումարների: Ճիշդ չէ, թէ Էստէրհադի գրել է բոլորեթ, որպէս թէ Սանդգերի հրամանով: Սանդգերի ընդունակ չէր այդպիսի հրաման տա- րու, ուր մնաց, որ նա ամենքից ուղ իմացաւ. բոլորեթի դոյուլեան մասին ճիշդ չէ և այն, որ իբր թէ բոլորեթ տուել է դեսպանատան դեսպանը: Խուզարկու բերօն երեք յարաբե- րութիւն չէ ունեցել դեսպանին հետ: Վկան ա- պացուցանում է Էստէրհադի և Անրիի համա- խոճ լինելու անկարելիութիւնը. վերջինս չէր բերել անձամբ խուզարկու բերօն, —բոլորեթն, որը կարող էր նրա դէմ կասկածներ գարկեց- նել: Բոժէ խօսում է այնուհետ այն թելմու- թեան մասին, որով մի որոշեալ դեսպանու- թեան կցորդ, որի անունը նա չէ կամենում տալ, վարվում է դոկումենտների հետ: Վկան կարդում է մի հատված Ա. և B. գործակալների նամակից և ասում է, թէ այդ նամակում Իրէյ- ֆուսի անունը կրկնվում է երկու անգամ, իսկ Էստէրհադի անունը չէ պատահում ոչ մի տեղ: Ոչ մի դոկումենտ չէ կարելի վերադրել Էստէր- հադիին, բացի Պիկարի աշխատեց արած «Petit Bleu»-ից: Բոժէ ասում է, թէ «Այդ սրկիպ D» խօսքերով դոկումենտը շատ մտահոգութիւն էր պատճառում նրան—թէ արդեօք ում կարող էր վերաբերվել այդ սկզբնապատճառ: Նա ասում է այդ և նայում է Իրէյֆուսի վրա: Իրէյֆուս շարժում է ունեքը: Սատիկ յուղված Բոժէ ար- տասանում է ճնշված ձայնով, որ նա չէ հասկանում, թէ ինչպէս իր նման գործում շահ չունեցող մարդու տեղեկութիւններից կարողացել են գերադասել են այնպիսի մարդկանց տեղեկու- թիւնները, որոնք ձեռնուտ է այդ դաւաճանու- թիւնը: Գեներալի աշխատեց արցունք է հոսում: Նա շարունակում է այնուհետ մանրամասն ընել բոլորեթն և աշխատում է ապացուցանել, թէ միայն Իրէյֆուսն էր ծանօթ նրա մէջ յիշ- ված դոկումենտների հետ: Էստէրհադին Ոչինչ չէր կարող իմացում: Վկան այդպիսի է, թէ ինչ- կար դիմում էր խաբեալ միջոցների, որպէս զի կարողանար Իրէյֆուսին փոխարինել մի ու- րիշ մեղադրեալով: Նա ծախսեց այդ բանի հա- մար մեծ գումարներ, որոնք գոյացել էին Սանդ- գերի խնայողութեան շնորհիւ: Բոժէ մեղադրում է Պիկարին բացի այդ այն բանում, թէ նա ծածկել է Իրէյֆուսի վրա կասկած գցող մի դոկումենտ: Վկան յղում է և կը շարունակի ցուցմունքը վաղը: Նախագահի հարցին Իրէյ-

Типографія Грузинск. Т.—ва Орбелиановская ул., № 27